24 դեկտեմբերի 2019 թվականի N 895 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N 77-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «121,032,231 դրամ» բառերը փոխարինել «131,397,356 դրամ» բառերով.

2) ծրագրի 6-րդ կետում «121,032,231 (հարյուր քսանմեկ միլիոն երեսուներկու հազար երկու հարյուր երեսունմեկ)» բառերը փոխարինել «131,397,356 (հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր ինսունյոթ հազար երեք հարյուր հիսունվեց)» բառերով.

3) ծրագրի 9-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ «Ջեռուցման նոր համակարգի գնում և տեղադրում՝ 10,365,125 դրամ».

4) ծրագրի 9-րդ կետում «Ընդամենը՝ 98,781,971 դրամ (ինսունութ միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր յոթանասունմեկ)» բառերը փոխարինել «Ընդամենը՝ 109,147,096 դրամ (հարյուր ինը միլիոն հարյուր քառասունյոթ հազար ինսունվեց) բառերով, իսկ «121,032,231 դրամ» բառերը՝ «131,397,356 դրամ» բառերով.

5) ծրագրի 10-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝

«31.	14.11.19	1/11-19	«Թերմոռոս-Ար» ՍՊԸ	Ջեռուցման նոր համակարգի գնում և տեղադրում	10,365,125».

6) ծրագրի 10-րդ կետում «72,357,898» թիվը փոխարինել «82,723,023» թվով:

2. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 02552842) կողմից «Թերմոռոս-Ար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02566649) 2019 թվականի նոյեմբերի 14-ին կնքված՝ N 1/11-19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են ջեռուցման նոր համակարգի ձեռքբերում և վերջինիս մոնտաժման, թողարկման ու կարգավորման աշխատանքների իրականացում՝ 10,365,125 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 24
Երևան